



**«Այլակրօն հայերն աշխարհի» թեմայով
խորհրդածողովի մասնակիցներուն**

Միբելի հայրենակիցներ.

Նկատի առնելով 8 Սեպտեմբեր 2016 թ.-ին Երեւանի մէջ կայացած խորհրդածողովի արձանագրած արդիւնքները եւ ընդունած յայտարարութիւնը՝ կ'առաջարկենք աշխատանքները շարունակել հետեւեալ ուղղութիւններով.

1. Արեւմտեան Հայաստանի եւ յարակից տարածքներուն մէջ, նաեւ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ ապրող այլակրօն հայերուն վերաբերեալ տուեալները, տեղեկութիւնները, ուսումնասիրութիւնները հաւաքելն ու մէկտեղելը, այլ խօսքով՝ այս թեմայով տուեալներու դարանի (բանկի) ստեղծումը,
2. Կը խնդրենք առաջնային համարել՝ Արեւմտեան Հայաստանի եւ յարակից տարածքներուն մէջ ապրող այլակրօն հայերուն վերաբերեալ տուեալները, տեղեկութիւններն ու ուսումնասիրութիւնները հաւաքելն ու մէկտեղելը,
3. Յաջորդ կարեւոր խնդիրը՝ Արեւմտեան Հայաստանի եւ յարակից տարածքներուն մէջ (այդ շարքին՝ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ) ապրող այլակրօն հայերուն հետ կապերու հաստատման մարտավարական-աշխատանքային ծրագիրներուն մշակումն է:

Կրնանք միասնական աշխատիլ նշեալ ուղղութիւններով, եւ ապագայ խորհրդածողովին պատրաստուիլ՝ տուեալ հարցերու շուրջ ծագող միտքերը, ծրագիրներն ու մարտավարութիւնը վերջնականապէս ճշգրտելու եւ համադրելու համար:

Յարգանքներով եւ յաջողութեան մաղթանքներով՝

Արմենակ Հարմանտայեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Հայրենակցական, համայնքային, հայրենասիրական եւ Հաւատքի հարցերու մշտական յանձնաժողովներու ներկայացուցիչ

10 Հոկտեմբեր, 2016 թ.,

Փարիզ